ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 նոյեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

161
(2641)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 131

Հայաստանի ԱԺ աշխատակազմը որոշել է անվտանգության լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել Ազգային ժողովի շենքի համար, եւ այդ նպատակով ԱԺ դարպասները նորից զոդում են եւ պարիսպների երկայնքով փշալար անցկացնում: Այս մասին հայտնել է ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանը: Այս ամենը եւս մեկ անգամ ապացուցում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոստումները տարիներ հետո իրականություն չեն դառնում: Կհիշեք՝ 2018 թվականի թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ՀՀ հպարտ քաղաքացիների համար այսուհետ Հայաստանում փակ դռներ չպետք է լինեն, եւ նրանք կարող են խփել բացել անգամ կառավարության դուռն ու ներս մտնել, որովհետեւ ժողովուրդն է եկել իշխանության: «Պետք է բացենք Ազգային ժողովի դռները ՀՀ քաղաքացիների առաջ: Երբ մենք բացում էինք փակ դռները, մեզ ասում էին՝ ինչո՞ւ եք դա անում. մենք ասում էինք՝ Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի քաղաքացիների առաջ փակ դռներ չեն կարող լինել, եւ Հայաստանի քաղաքացիների առաջ փակ դռներ չեն լինելու», - ասել էր Նիկոլ Փաշինյանը: Եվ իսկապես այդ նույն օրերին բացվեցին նաեւ Բաղրամյան 26-ի դռները, ու մարդիկ սկսեցին զբոսնել նախագահական նստավայրի տարածքում, սկսեցին մտնել խորհրդարանի բակ, սակայն այդ ամենը տեւեց ընդամենը մոտ տասը ամիս: Արդեն 2019 թվականի օգոստոս ամսին Ամուլսարի հանքի շահագործման դեմ պայքարողները որոշել էին ակցիա անել խորհրդարանի մոտ, այդ օրը նրանց թույլ չտվեցին մտնել ԱԺ բակ, եւ արդեն պարզվեց, որ ԱԺ դարպասները փակ են: ԱԺ դարպասները հետագայում կոնկրետ ժամերով էին բացում, ապա միանգամից փակվեց, խստացվեց անգամ լրագրողների մուտքը, իսկ հիմա պարզվում է, որ լրացուցիչ անվտանգության աշխատանքներ են կատարվում: Այսինքն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այն ժամանակ խոսելով ժողովրդավարության մասին, հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



Արդեն մեկ ամսից ավելի է, ինչ ՀՀ արդարադատության նախարարությունը ղեկավար չունի: Նախկին նախարար Կարեն Անդրեասյանը հրաժարական տվեց հոկտեմբերի 5-ին, ապա Ազգային ժողովի կողմից ընտրվեց Բարձրագույն դատական խորհրդի անդամ, հետո՝ նախագահ: Այդ օրվանից մինչեւ հիմա նախարարությունը ղեկավարվում է պաշտոնակատար Գրիգոր Մինասյանի կողմից: Սկզբնական շրջանում տեղեկություններ էին տարածվել, թե հենց Գրիգոր Մինասյանն էլ կնշանակվի նախարար, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, կարծես թե, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում իրավիճակ է փոխվել, եւ ղեկավար կազմի թվում կա հատված, որն այնքան էլ կողմ չէ, որ Գրիգոր Մինասյանը նշանակվի արդարադատության նախարարի պաշտոնում՝ նրան համարելով նախկիններ հետ կապ ունեցող: Մի մասն էլ հակված է ՀՀ ԱԺ պետահրավական հարցերով հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանին տեսնել այդ պաշտոնում: Կուսակցության ներսում այս հարցում այլակարծություն եւ տարբեր տրամադրություններ կան. մի մասը փորձում է համոզել, որ Մինասյանն է լավագույն թեկնածուն, մի մասն էլ թե՝ Վարդանյանը: Ի վերջո, ինչպես կավարտվեն քննարկումները, եւ ինչ որոշում կկայացվի, դեռ վաղ է ասել, սակայն փաստ է՝ նախկին նախարարի հրաժարականից մինչեւ այժմ նոր նշանակում այդպես էլ չի կատարվել Նիկոլ Փաշինյանի կողմից:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական վարույթով հարցաքննվել է Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը: Ավելին՝ մեզ հասած լուրերի համաձայն՝ Արցախից Պաշտպանության բանակի գեներալներ են եկել Երեւան ու հանդիպել ուժային կառույցների ղեկավարներին, քննարկել այն հարցը, որ Արզումանյանին պետք է բաց թողնել, արդար չէ, որ միայն նա է կալանքի տակ: Նշենք, որ քրեական վարույթով առերեսումների շարքը շարունակվում է: Նախաքննական մարմինը Արցախի պաշտպանական բանակի հրամանատարների եւ այլ անձանց է հրավիրում հարցաքննության, առերեսում ՊԲ նախկին հրամանատարի հետ: Նկատենք, որ սովորաբար առերեսումներ են իրականացվում այն ժամանակ, երբ քրեական վարույթով հակասություններ են առաջանում գործով անցնող անձանց ցուցմունքներում: Նկատենք, որ Արզումանյանը կալանավորվել էր սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս գտնվում է կալանքի տակ: Ի դեպ, գրել էինք, որ մինչեւ նրան մեղադրանք առաջադրելը վկայի կարգավիճակով հարցաքննվել է նաեւ ԱԺ պատգամավոր, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ազգային ժողովի «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների պատգամավորները տեւական դադարից հետո որոշել են վերադառնալ խորհրդարան եւ բնականոն կերպով մասնակցել նոյեմբերի 15-ին մեկնարկելիք հերթական նստաշրջանի աշխատանքներին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ընդդիմադիր խմբակցությունները նման որոշում են կայացրել՝ հաշվի առնելով Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած խնդիրները, երբ իսկապես օրհասական վիճակ է ստեղծվել: Ընդդիմադիրները որոշել են վերադառնալ եւ պայքարել նաեւ այդպես՝ զուգահեռ շարունակելով նաեւ բողոքի ակցիաները: Նկատենք, որ վերջին նստաշրջանի ժամանակ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավորներն արդեն մասնակցում էին նստաշրջանի աշխատանքներին քվեարկությունների տեսքով:

ԱՀԱԳՆԱՑՈՂ ԳՆԱՃ

ԳՆԱՃԻ ՏԵՄՊԸ ՉԻ ՆՎԱԶՈՒՄ

2023 թվականի պետական բյուջեի նախագիծը մեծ իմաստով նույն տրամաբանությունն ու կառուցվածքն ունի, ինչ նախորդ տարիների պետական բյուջեներն են ունեցել: Բնական է՝ թե՛ եկամուտների, թե՛ ծախսերի մասով ավելացում կա, սակայն գլոբալ տրամաբանության, վարվող տնտեսական, բաղամական մոտեցումների ու, առհասարակ, բյուջեի կառավարման իմաստով էական տարբերություններ չկան. տեսակետը տնտեսագետ Կառլեն Խաչատրյանինն է: Ողջունելի է, ասում է, որ պաշտպանության ծախսերը մոտ 45 տոկոսով ավելի են նախատեսված, բայց պետք է փաստենք, որ այս բայլն ուշացած է:

«Պատերազմից միայն երկու տարի անց պաշտպանական բյուջեն էապես մեծացնելն իրապես ուշացած է, բայց, այնուամենայիվ, ողջունելի է, որ թեեւ երկու տարի ուշացումով, իշխանություններն, այուամենայնիվ, գնացել են այդ քայլին»,- նշում է մեր զրուցակիցը:

Ընդհանուր առմամբ, սոցիալական ոլորտում, կարծում է տնտեսագետը, ճիշտ համամասնությամբ չեն գումարները բաշխվել, քիչ ավելացում է նախատեսվում, դրանք ընդամենը 11 տոկոսով են բարձրացել, ընդ որում՝ սոցիալապես այնպիսի խոցելի խավերը, ինչպիսիք են նպաստառուները, հաշմանդամություն ունեցող անձինք, նրանց տրվող նպաստները որեւէ կերպ չեն վերանայվել: «Սոցիալական ծրագրերում հիմնականում գերակշռում է կենսաթոշակառուների թոշակը 3100 դրամով բարձրացնելու էֆֆեկտն ու դրա հաշվին սոցիալական ծախսերը, նախորդ տարվա համեմատ, 11 տոկոսով ավելի են: Ու այս ֆոնին երբ տեսնում ենք, որ ոստիկանության ծախսերը մոտ 20 տոկոսով ավելացվում են, բնականաբար հարց է առաջանում, թե այս պահին արդյոք դա էր առաջանահերթ»,- հավելում է նա:

Ըստ տնտեսագետի՝ գլոբալ առումով եթե ուսումնասիրենք, բյուջեում նաեւ կապիտալ ծախսերի էապես աճ է նախատեսվում, բայց միայն այս տարվա առաջին 9 ամիսների ընթացքում կապիտալ ծախսերի կատարողականը մոտավորապես 55 տոկոս է իրականացվել, այսինքն՝ պլանավորածի կեսն է միայն կյանքի կոչվել: Ընդ որում՝ նույն միտումն ունեցել ենք նաեւ նախորդ մի քանի տարիներին: «Իշխանությունը ավանդաբար թերակատարում է հատկապես կապիտալ ծախսերը, դրանով հանդերձ տարեցտարի ավելի շատ գումար է նախատեսում կապիտալ ծախսերի համար, ինչը, կարծում եմ, այդքան էլ ճիշտ չէ, ավելին՝ տնտեսական քաղաքականության տրամաբանության շրջանակներում դիտարկելիս էֆեկտիվ չի: Գլոբալ առումով, այո, կապիտալ ծախսերի ավելացումը կարեւոր է զուտ ենթակառուցվածքների ավելացման, հետագա տնտեսական զարգացման պոտենցիալ ձեւավորելու իմաստով, բայց դրանք նախատեսելն ու չկատարելը շատ ավելի վատ հետեւանքների է հանգեցնում»,- ասում է Կառլեն Խաչատրյանը:

Ինչ վերաբերում է անդադար նկատվող գնաճին, ապա մեր զրուցակիցը նշում է, որ Հայաստանում դոլարը գնալով արժեզրկվում է, դրամը՝ արժեւորվում, ու, մոտավոր հաշվարկներով, եթե Հայաստանում դոլարը միջինում 5-7 տոկսով արժեւորվեր, ոչ թե մոտ 20 տկոսով արժեզրկվեր, ապա մեր երկրում գնաճը 10-ի փոխարեն 18.5-19 տոկոս կլիներ: Ու այդ ֆոնին պատկան գերատեսչությունների պնդումները, թե մեզ մոտ գնաճն այդքան էլ բարձր չէ, ըստ տնտեսագետի՝ ճիշտ չէ: Գնաճային գործոններն, ասում է, բազմազան են. դրանք երբեմն պայմանավորված են ոչ տնտեսական, այլ, օրինակ, անվտանգային ու քաղաքական գործոններով, որոնք որոշակի ռիսկեր են առաջացնում, բիզնեսն էլ այդ ռիսկերի պայմաններում ավելի բարձր հավելագին է պահանջում:

Անվտանգային, քաղաքական հարցերը, ասում է տնտեսագետը, թույլ չեն տալիս, որպեսզի բիզնեսներն ընդլայնեն ծավալներն ու արտադրական հզորությունները, ներկրման ծավալներն էլ ավելի մեծանան: Գնաճային գործոնները բազմազան են, դրանք պայմանավորված են ոչ թե տնտեսական, այլ անվտանգային գործոններով, քաղաքական անկայունությամբ, որոնք որոշակի ռիսկեր են բերում, բիզնեսն էլ այդ ռիսկերի պայմաններում ավելի բարձր հավելագին է պահանջում:

Բնականաբար, շեշտում է, նաեւ տնտեսական գործոններ կան՝ պայմանավորված, օրինակ, Ռուսաստանից Հայաստան եկած մեծաթիվ մարդկանցով, որ իրենց հետ վճարունակ պահանջարկ են ձեւավորել, եւ փաստացի դրանով, երբ ապրանքների քանակը չի փոխվում, բայց դրանց նկատմամբ պահանջարկը մեծանում է, գնաճային որոշակի երեւույթներ են առաջ գալիս տնտեսության մեջ:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ 2 ՏԱՐԻ ԱՆՑ

Ամեն գնով խաղաղության գնացող իշխանությունը լեգիտիմացնում է ամեն գնով իշխանափոխությունը. այս մասին նոյեմբերի 9-ին կայացած քննարկման ժամանակ ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՅԴ անդամ Արմեն Ռուստամյանը:

Նա նկատեց, որ իշխանությունը միավորվելու կոչ է անում, որպեսզի միասին հանձնվենք թշնամուն այն դեպքում, երբ Ադրբեջանի եւ Թուրքիայի նպատակն է Հայաստանը ոչնչացնելը:

Ներկայիս ստատուս քվոյի պայմաններում չի կարող փաստաթուղթ ստորագրվել, որը բարենպաստ կլիներ Հայաստանի համար: Ռուստամյանը հիշեցրեց, որ Ռուսաստանի թուլացման պատճառով, որը բախվել է աշխարհի քարտեզի վրա իր ներկայությունն ամրապնդելու էքզիստենցիալ խնդրի հետ, ռազմաքաղաքական հավասարակշռությունը խախտվել է՝ հօգուտ Հայաստանի հակառակորդների, ուստի անիմաստ է սպասել Հայաստանի համար օգտակար մի բանի:

«Խոսվում է այն մասին, որ փաստաթուղթը կարող է ստորագրվել մինչեւ տարեվերջ, բայց այդ ընթացքում ռազմաքաղաքական իրավիճակը չի փոխվի, Իսկ Հայաստանը կարող է բախվել անդառնալի հետեւանքների: Ուստի պետք է աշխատել այն երկրների հետ, որոնց համար Հայաստանի զիջումները նույնպես կենսական նշանակություն ունեն: Իրանը գիտի, որ դա իր համար «կարմիր գիծ» է, եւ ամեն գնով կպաշտպանի այն»,-ասաց պատգամավորը:

Նրա գնահատմամբ՝ հանրության զգալի մասն ընդունել է այն թեզը, որ Ղարաբաղը հանձնելով՝ հանգիստ կապրենք: «Կապիտուլյացիան կենսական շահերի զիջում է, որը իշխանությունն անվանում է «միակ հնարավոր լուծում»: Բայց Ղարաբաղի ինքնորոշման իրավունքից հրաժարվելը Հայաստանը կդարձնի ագրեսոր, որը պարտավոր կլինի անընդհատ ինչ-որ բան զիջել»,- նշեց Ռուստամյանը:

«Հանրությունը չի գիտակցում՝ ինչ է սպասվում Ղարաբաղի ինքնորոշման իրավունքից հրաժարվելու դեպքում, ուստի պետք է հրաժարվել իշխանության եւ ընդդիմության միջեւ պարզունակ պայքարից»,- հավելեց Ռուստամյանը:

Նա վստահ է, որ Հայաստանը միշտ արտաքին խաղացողներին հետաքրքրել է երեք գործոնով՝ Ղարաբաղով, Սյունիքով եւ ԱԷԿ-ով: Դեռ 1996-ին Հայաստանի վրա ճնշում է եղել նշաձողն իջեցնելու, եւ զուգահեռ ճնշում է եղել նաեւ հակառակ կողմի վրա: Այս հարցին երեկ՝ «Հայաստանի իրական օրակարգ» թեմայով քննարկման ժամանակ, անդրադարձել է փաստաբան Արամ Օրբելյանը:

Նրա խոսքով՝ բանակցությունների ժամանակ երկու կողմին էլ փորձում են համոզել, որ նշաձողն իջեցնի, որ համաձայնություն կայանա. «Հիմա մեզ ասում են՝ իջեցրեք նշաձողը: Եթե մենք ամեն անգամ, երբ մեզնից մի բան են ուզում, տանք, Հայաստան չի մնա, կամ Հայաստան շատ վաղուց մնացած չէր լինի: Միջազգային հարաբերություններում միշտ էլ դիմացինդ մի բան ուզում է: Հիմա եթե վաղը միջազգային հանրությունը մեզ ստիպի, որ Սյունիքի կեսը տանք Ադրբեջանին, եթե մենք գնում, ասում ենք՝ Ադրբեջանը սենց բան արեց, վայ, բա ի՞նչ ենք անելու, հետո վերցնում ենք այդ փաստարկը օգտագործում ենք ներքին օպոնենտների դեմ, ամեն անգամ կրկնում ենք ադրբեջանական թեզերը եւ ամեն ինչ անում ենք, որ դա լինի, պարզ է, որ պարտվելու ենք»,- ասաց նա:

ԱՎԱԳԱՆԻՆ՝ ՆՈՐ «ՄԱՀԱԿՈՎ»

Հայաստանի կառավարությունը մտադիր է փոփոխել Երեւան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին օրենքն ու ավագանուն առաջին հայացքից աննշան, իրականում, սակայն, մահակի դեր կատարող լիազորությամբ օժտել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ խորհրդարանի «դեռեւս օրակարգում չընդգրկված» նախագծերի փաթեթների շարքում է վերնոշյալ օրենքը, որ ենթադրում է Երեւանի ավագանու լիազորությունների վերջին կետը հետեւյալ կերպ խմբագրել. «Սահմանում է մշակութային գործունեության իրականացման նպատակով Երեւան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ եւ այլն) օգտագործման պայմանները, պահանջներն եւ սահմանափակումները»: Այսինքն՝ եթե Երեւանի ավագանին փողոցում անցկացվող միջոցառումների կարգն էր միայն սահմանում, ապա այժմ կարող է այն կանոնակարգել ու, ըստ անհրաժեշտության, սահմանափակել այն: Նշենք, որ վերոնշյալ օրենքն այս տարի՝ 2022-ին, մեկ անգամ արդեն իսկ փոփոխվել է: Օգոստոս ամսին այն խորհրդարանում քննարկվել ու ընդունվել էր հետեւյալ բովանդակությամբ. «Ավագանին սահմանում է Երեւան քաղաքի բացօթյա վայրերում (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ եւ այլն) անհատների եւ խմբերի կողմից ստեղծագործական գործունեության (ելույթների) իրականացման կարգը»: Այժմ, փաստորեն, կառավարության անդամները ցանկանում են արգելողի մահակով օժտել Երեւանի ավագանուն, որ ոչ ցանկալի միջոցառումների դեպքում օրենքի համապատասխան դրույթին հղում անեն ու մերժեն հայտատուի՝ բացօթյա միջոցառում անցկացնելու դիմումը:

ՔԱՇԱԹԱՂԸ՝ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերով հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը նոյեմբերի 8-ին խորհրդարանում հանրային քննարկում էր կազմակերպել Քաշաթաղի շրջանից տեղահանված բնակիչների խնդիրների թեմայով, որին մասնակցում էին պատկան գերատեսչությունների ներկայացուցիչներ: Հենց Քաշաթաղի շրջանի բնակիչներն էին դիմել պատգամավորին եւ ներկայացրել իրենց խնդիրները, եւ Թագուհի Թովմասյանը որոշել էր հնչեղություն տալ այդ հարցին: Քաշաթաղցիները ահազանգում են՝ պետությունը նրանց 10 մլն դրամ է առաջարկում տուն գնելու համար, իսկ շուկայում այդ գնով տուն գնել չեն կարող: «Այսօր 18 000 քաշաթաղցիներ մնացել են անօթեւան: Հարցն այն է, որ դեռ այն ժամանակ՝ 1990-ականներին, միջազգային կառույցներում տեղյակ չէին, որ Քաշաթաղը վերաբնակեցվում է: Ըստ էության, մենք այսօր շատ խոցելի վիճակում ենք, քանի որ ստացվում է, որ տեղի է ունեցել ապօրինի վերաբնակեցում, որի նպատակն էր փողերի լվացումը»,- ասաց քննարկման մասնակիցներից մեկը: Նրա խոսքով՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունն առաջարկում է սահմանամերձ գոտում բնակեցնել քաշաթաղցիներին: Սակայն, ըստ տղամարդու, «ծակ գրպանով» քաշաթաղցին ի՞նչ է անելու սահմանամերձ գոտիում. ո՛չ գույք ունի, ո՛չ էլ ինչ-որ գործ ձեռնարկելու միջոցներ:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը նոր նախագիծ է մշակել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախագծի ընդունման դեպքում հստակ սահմանված կլինեն Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց կացարանով ապահովման մեխանիզմները եւ միջոցները:

Բանն այն է, որ ՀՀ-ում ապաստան հայցող անձանց թիվը տարեկան միջինում կազմում է շուրջ 270 անձ: Այդ թիվն առանձին տարիներին, տարածաշրջանում առկա հակամարտություններով պայմանավորված, աճում է: Այսպես, սիրիական ճգնաժամի հետեւանքով 2012թ.-ին ՀՀ-ում ապաստան հայցող անձանց թիվը հասել է 579-ի, իսկ 2013-ին՝ 320-ի: Ակնհայտ է աճի միտումը նաեւ 2022թ.-ին Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների հետեւանքով: 2022թ. առաջին 6 ամիսների ընթացքում արդեն Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց են ներկայացրել 320 անձինք, որոնցից 213-ը Ուկրաինայի քաղաքացիներ են: ՀՀ-ում տարեկան միջին հաշվով փախստական են ճանաչվում եւ ապաստան են ստանում շուրջ 150 անձինք:

Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած եւ փախստական ճանաչված անձանց կացարանի խնդիրը մասամբ լուծվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության «Հանրակացարաններ» պետական ոչ առեւտրային կազմակերպության սպասարկման ենթակա սոցիալական տներում (այսուհետ՝ Սոցիալական տներ) նրանց ժամանակավոր կացարան տրամադրելու միջոցով: Սոցիալական տներում իրատեսական է բնակեցնել նշված 150 անձանց մեկ երրորդին, իսկ մնացած 100 անձի (շուրջ 40 ընտանիք) համար կացարանով ապահովումը հնարավոր է իրականացնել բնակարանի վարձակալության փոխհատուցման միջոցով:

ԾՆՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ

Հայաստանում այս տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին ծնվածների թիվը պակասել է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ մեր հանրապետությունում եթե 2020 թվականի հունվար եւ սեպտեմբեր ամիսներին ծնվածների թիվը կազմել է 20 հազար 558, 2021-ի նույն ժամանակահատվածում՝ 26 հազար 847, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում այն պակասել է՝ դառնալով 26 հազար 511:

Ի դեպ, ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանում ծնված աղջիկների թիվը բավականին պակաս է տղաների թվից: Օրինակ՝ այս տարվա 9 ամիսներին մեր հանրապետությունում ծնվել է 12 հազար 538 աղջիկ, իսկ ծնված տղաների թիվը կազմում է 13 հազար 973՝ 1436-ով ավելի:

ԽԱՂԱՂ ՉԷ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՆՑ

Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից երկու տարի անց խաղաղ չէ ո՛չ Արցախում, ո՛չ Հայաստանում, լինում են մարդկային կորուստներ:

Չնայած երկու տարի առաջ՝ նոյեմբերի 9-ին, Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանն ու Ադրբեջանը հայտարարությամբ պարտավորվեցին դադարեցնել ռազմական գործողությունները եւ կանգ առնել զբաղեցրած դիրքերում, Ադրբեջանը անցած երկու տարում միայն Հայաստանից արդեն շուրջ 130 քառակուսի կիլոմետր տարածք է օկուպացրել:

Վերջին լայնածավալ հարձակումը սեպտեմբերի 13 -ին էր, երբ ադրբեջանական բանակը երեք ուղղություններով ներխուժեց Հայաստանի ինքիշխան տարածք՝ օկուպացնելով Սյունիքի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերի մի շարք հատվածներ:

Ադրբեջանական զինուժն այսօր Ջերմուկից 4.5 կիլոմտեր հեռավորության վրա է՝ նախկին 11 կիլոմետրի փոխարեն: Ջերմուկցիների պնդմամբ՝ ադրբեջանցի զինվորները շարունակում են մնալ քաղաքի մատույցներում եւ նկատելի են անգամ անզեն աչքով:

Զինված ուժերի գլխավոր շտաբի փոխանցմամբ՝ ադրբեջանական զինուժը դիրքային առավելություններ է ձեռք բերել նաեւ Գեղարքունիքի մարզի Շորժաների ուղղությամբ:

Տարածքային կորուստներին զուգահեռ սեպտմեբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով միայն մեկ օրում շուրջ 210 հայ զինծառայող է զոհվել:

Ադրբեջանական զինուժը Հայաստանի ինքիշխան տարածքում իր առաջխաղացումը սկսել է դեռ 2021-ի մայիսից:

Ընդ որում՝ անցած երկու տարվա ընթացքում Ադրբեջանը օկուպացրել է ոչ միայն ինքիշխան Հայաստանի տարածքները, այլեւ այս տարվա մարտին ռուս խաղաղապահների ներկայությամբ ներխուժել է Արցախի Փառուխ գյուղ՝ գրավելով կարեւոր նշանակություն ունեցող Քարագլուխ բարձունքի մի մասը:

Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ամրագրված հրադադարը խախտելուց բացի, Ադրբեջանը դեռ չի կատարել նաեւ նույն հայտարարությամբ սահմանված՝ ռազմագերիներին վարադարձնելու պահանջը: Ադրբեջանը հաստատել է, որ 44-օրյա պատերազմից հետո 33 հայ մնում է Բաքվի բանտերում, նրանց, սակայն, Բաքուն ռազմագերի չի համարում եւ հրաժարվում է վերադարձնել:

Պաշտպանության նախկին նախարար, ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը երեկ մասնակցում էր քննարկման եւ հայտարարեց, որ Ադրբեջանը շահագրգռված չէ իրականացնել նոյեմբերի 9-ի հայտարարության կետերը, քանի որ արդեն իսկ, առանց մի կրակոցի, բազմաթիվ տարածքներ է ստացել:

«Ադրբեջանի ղեկավարությունն ամբողջությամբ այսօր փորձելու է չիրականացնել նոյեմբերի 9-ի փաստաթղթի կետերը, որովհետեւ ստացել է իր համար ամանակարեւորը առանց որեւէ փամփուշտի, հետ են վերադարձրել Ակնայի, Քաշաթաղի, Քարվաճառի, նաեւ Բերձորի այդ միջանցքի որոշ հատվածներ: Նա հիմա պայքարում է հետագա կետերի իրականացման համար. խոսքը վերաբերում է ճանապարհների բացմանը, ընդ որում՝ պնդելով որպես «Զանգեզուրի միջանցքի» բացում, եւ դրա համար ինքը շահարկումներ է անելու նույն նոյեմբերի 9-ի փաստաթղթի կետերից, ասենք՝ գերիների վերադարձ՝ յուրաքանչյուր անձնավորության վերադարձի համար ինչ-որ շահ ստանալով Հայաստանի Հանրապետությունից», - ասաց Օհանյանը:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օկուպացված Շուշիում Ալիեւի հայտարարությունը հերթական անգամ լցված էր Հայաստանի եւ Արցախի դեմ ուժի կիրառման խոստովանություններով եւ սպառնալիքներով: Այս մասին իր սոցիալական կայքում գրել է Արցախի պետնախարարի խորհրդական Արտակ Բեգլարյանը՝ անդրադառնալով Ալիեւի հնչեցրած սպառնալիքներին:

«Ալիեւյան ռեժիմը շարունակում է ցեղասպանության եւ ատելության քաղաքականությունը հայ ժողովրդի եւ հայոց պետականության նկատմամբ: Պետք է դադարեցնել այս քաղաքականությունը եւ կանխել նոր հանցագործությունները միջազգային իրավունքի եւ պարտավորությունների շրջաններում»,- նշել է Բեգլարյանը:

ՈՒՂԻՂ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՆԱՏՕ-ն աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը»,- սոցիալական ցանցում գրել է ՆԱՏՕ-ի Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի գծով հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինան:

«Ուրախալի է տեսնել, որ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Արարատ Միրզոյանը եւ Ջեյհուն Բայրամովը նորից մասնակցում են ուղիղ բանակցություններին: ՆԱՏՕ-ն սատարում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, ինչը կարեւոր նշանակություն ունի Հարավային Կովկասի կայունության եւ բարգավաճման համար, եւ ողջունում է ԱՄՆ-ի ջանքերն այս ուղղությամբ»,- նշել է նա:

ՓԵԼՈՍԻՆ ՎԵՐԸՆՏՐՎԵԼ Է

ԱՄՆ Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների արդյունքներով Նենսի Փելոսին վերընտրվել է Ներկայացուցիչների պալատի խոսնակի պաշտոնում: 82-ամյա Փելոսին «Դեմոկրատական կուսակցության ամենահայտնի դեմքերից մեկն» է եւ «հանրապետականների անհաշտ հակառակորդը»:

Ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո Փելոսին հանդես է եկել հայտարարությամբ: «Թեեւ բազմաթիվ ընտրարշավներ դեռեւս ընթանում են համահավասար տեմպերով, բայց արդեն պարզ է, որ պալատում դեմոկրատական ներկայացուցիչների եւ թեկնածուների արդյունքները վստահորեն գերազանցում են սպասումներն ամբողջ երկրում»,- ասվում է Փելոսիի հայտարարության մեջ

Ի ՆՇԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ

Նոյեմբերի 7-ին Ստրասբուրգի քաղաքային խորհուրդն ընդունել է Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում Հայաստանին աջակցելու առաջարկը:

«Ի նշան համերաշխության՝ Ստրասբուրգ քաղաքը կբարձրացնի Հայաստանի դրոշը քաղաքապետարանի եւ վարչական կենտրոնի առջեւ»,- գրված է Եվրոպայի խորհրդում Հայաստանի մշտական ներկայացուցչության սոցիալական ցանցում:

ԻՆՉ ՓՈՒԼՈՒՄ Է

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Ինչպես հայտնի է, ՀՀ քննչական կոմիտեում Ռ. Վարդազարյանի կողմից հրապարակված աղմկահարույց ձայնագրության կապակցությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասով եւ 486-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում հարցաքննվել են ԲԴԽ նախկին նախագահ պարոն Գ. Ջհանգիրյանը վկայի դատավարական կարգավիճակով, ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանը, ԲԴԽ անդամ Ստեփան Միքայելյանը: Մինչ օրս քրեական վարույթով Ռուբեն Վարդազարյանը տուժող չի ճանաչվել, եւ դեռ ավելին՝ գործով մինչ օրս չկա մեղադրյալ:

Ինչո՞ւ է լռում նախաքննական մարմինը:

Հիշեցնենք, որ, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի կողմից հրապարակված ձայնագրության հիման վրա, Գագիկ Ջհանգիրյանի դեմ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Այդ աղմկահարույց ձայնագրությունից ու Գագիկ Ջհանգիրյանի առավել անհասկանալի հարցազրույցից օրեր անց հայտարարվեց, թե վերջինս ունի առողջական խնդիրներ, եւ առողջական խնդիրների քողի ներքո հրաժարական տվեց՝ ԲԴԽ-ի համար նոր խառնաշփոթ առաջացնելով:

Աղմկահարույց ձայնագրության մասին զրուցել ենք Ռուբեն Վարդազարյանի փաստաբան Հովհաննես Խուդոյանի հետ:

-Ես պարոն Վարդազարյանի հետ մասնակցել եմ հարցաքննությանը, որի մասին հրապարակել եք, եւ դրանից հետո ոչ մի գործողության չենք մասնակցել եւ չենք տեղեկացվել: Առերեսումներ չեն եղել, որը ենթադրում եմ՝ պետք է լիներ: Նման ենթատեքստով բողոքները պահանջում են առերեսումներ, սակայն նորից եմ կրկնում՝ նման առերեսումներ դեռեւս չեն եղել, եւ նման խոսակցություններ դեռ չկան: Չեմ կարող անգամ ասել՝ արդյոք պարոն Վարդազարյանը պետք է տուժողի կարգավիճակ ունենա այս գործով, թե ոչ: Գիտեմ, որ քրեական գործը ընթացքի մեջ է, սակայն որեւէ տեղեկատվություն չունենք ընթացքի մասին. մի քանի անգամ խոսել եմ քննիչի հետ, բայց ոչ մի հստակ խոսք չկա:

-Այսինքն՝ առերեսում չկա՞, վկաները հարցաքննվեցին ու վե՞րջ:

-Սպասում ենք իրենց ընթացքին, այսինքն՝ հստակ ոչինչ չկա:

-Իսկ քննիչը ի՞նչ է ասել Ձեզ:

-Որ դեռեւս գործը քննության փուլում է, իսկ պարոն Վարդազարյանի մասնակցությամբ առայժմ գործողություն չկա անելու:

-Պարոն Վարդազարյանից պահանջել էին ձայնագրության ամբողջական տարբերակը եւ այս պահով ստացել էին համապատասխան մերժում. ո՞րն էր նրանց նպատակը:

-Այդ ամենը իր դիրքորոշումն է՝ ինչպես մյուս վարույթների շրջանակում, այնպես էլ այս վարույթով չներկայացնել ձայնագրությունը, քանի որ այնտեղ պարունակում է տվյալներ շատ ուրիշ անձանց վերաբերյալ, եւ դրանք ոչ իրավական են, եւ նա չի ցանկացել՝ դա հրապարակվի:

-Ձեր կարծիքով՝ արդյոք նախաքննական մարմինը կունենա՞ համարձակություն՝ Բարձրագույն խորհրդի նախկին դատական համակարգի նախագահին առաջադրելու մեղադրանք:

-Այդ հարցը պետք է ուղղել իրենց: Ես պատասխանել չեմ կարող:

-Դուք սպասելիքներ ունե՞ք:

-Որպես իրավաբան, այո, ակնկալիք ունեմ, քանի որ հիմքերը տեսնում եմ: Արդյոք իրենք կանեն, թե ոչ՝ դա իրենց տիրույթն է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԳՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Ոստիկանության Աշտարակի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Երեւան քաղաքի Խորենացու փողոցում հայտնաբերել, գողություն կատարելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Արարատի մարզի Խաչփար գյուղի 37-ամյա մի բնակչի՝ իր վարած «ԲՄՎ X5»-ով, եւ Երեւանի 36-ամյա մի բնակչի: Նրանց անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են փող, ժամացույց, ոսկյա մատանի եւ ականջօղեր՝ գնապիտակներով, ու բջջային հեռախոսներ:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ, որ նրանք նոյեմբերի 4-ի ժամը 14.00-ի սահմաններում փորձել էին գողություն անել Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի ռեստորանային համալիրներից մեկի մոտ կայանված «ՎԱԶ» մակնիշի մեքենայի սրահից եւ Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցի եկեղեցու ավտոկայանատեղիում կայանված «ՎԱԶ-2115»-ի սրահից, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չեն հասցրել: Իսկ խուզարկությամբ հայտնաբերված ոսկյա զարդերը գողացել էին եկեղեցու ավտոկայանատեղիում կայանված «Մազդայի» սրահից: Հանգամանքները պարզվում են:

Տղամարդիկ, կազմված փաստաթղթերը եւ գողոնը ներկայացվել են Արմավիրի մարզային քննչական վարչություն:

ՎՐԱԵՐԹ

Նոյեմբերի 8-ին՝ ժամը 21:25-ին, քաղաքացուց հաղորդում է ստացվել, որ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի Վ. Մամիկոնյան եւ Շիրվանզադե փողոցների խաչմերուկում վրաերթ է տեղի ունեցել:

ԱՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության փոխանցմամբ՝ դեպքի վայր մեկնած ոստիկանության ծառայողները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 21:20-ի սահմաններում, դեպքով չպարզված անձը անհայտ ավտոմեքենայով նշված փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 42-ամյա Ա. Պետրոսյանին (հաշվառված է Ասկերանի շրջանի Ավետարանոց համայնքում), որը փակ գանգուղեղային վնասվածք, գլխուղեղի սալջարդ, ձախ քունքային շրջանի գծային կոտրվածք, ասպերացիոն թոքաբորբ ախտորոշմամբ տեղափոխվել է հանրապետական բժշկական կենտրոն:

Պարզվել է, որ Ա. Պետրոսյանին վրաերթի է ենթարկել 29-ամյա Վ. Սարգսյանը (հաշվառված է Շուշի քաղաքում) «Նիսսան տիդա» ավտոմեքենայով:

Քաղաքացուն վրաերթի ենթարկելուց հետո վերջինս, թողնելով դեպքի վայրը, դիմել է փախուստի: Վ. Սարգսյանը բերման է ենթարկվել Ստեփանակերտ քաղաքի վարչություն: Նա գտնվում էր 0.719մգ/լ ոչ սթափ վիճակում: Ստուգմամբ զբաղվում է ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչությունը:

ԼՈՒՐԵՐ

ՏՈՒԺԵԼ Է 8 ՔԱՂԱՔԱՑԻ

Երեւան-Սիսիան ավտոճանապարհին տեղի ունեցած վթարի հետեւանքով տուժել է 8 քաղաքացի. տեղեկացնում են ՀՀ առողջապահության նախարարությունից: Նրանցից 5-ը գտնվում են մարզային բժշկական կենտրոնի հսկողության տակ: Բժիշկները տուժածների առողջական վիճակը միջին ծանրության են գնահատում:

Վթարից մյուս 3 տուժածներին տեղափոխել են մայրաքաղաքի բժշկական կենտրոններ: Նրանցից մեկի վիճակը ծայրահեղ ծանր է գնահատվում, եւ տեղափոխումն իրականացվել է սանավիացիայի միջոցով:

ԱՆՉԱՓԱՀԱՄԵԵՐԻ ԴԻ

«Հիմա ոչինչ ասել չեմ կարող, քննությունը կպարզի. ես այնքան եմ տեղեկացված այս պահին, որքան Դուք»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքի ղեկավար Օնիկ Ոսկանյանը:

«Լսել ենք, որ ծակող-կտրող գործիքներով հարվածներ են ստացել, բայց հաստատ ոչինչ ասել չեմ կարող, ավել մանրամասների չեմ տիրապետում»,-նշեց մեր զրուցակիցը:

Նշենք, որ քիչ առաջ հայտնի դարձավ, որ Շիրակի մարզի Պեմզաշեն համայնքի տներից մեկում երեկ հայտնաբերվել է 31-ամյա կնոջ եւ երկու անչափահաս երեխայի դի:

«Ոստիկանությունը ժամը 13:45-ին ահազանգ է ստացել, որ 911 ծառայությունից հաղորդում են ստացել, որ Պեմզաշեն գյուղում կա փակ դուռ, մեկնել է օպերատիվ խումբ, նշված հասցեում հայտնաբերվել է 31-ամյա կնոջ եւ երկու անչափահաս երեխայի դի, եղել են նաեւ արնանման հետքեր: Այս պահին օպերատիվ քննչական խումբը դեպքի վայրում է, կատարվում են համապատասխան գործողություններ»,- փոխանցեցին ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունից:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾ ՇՆԵՐ

Օրերս տարբեր սոցիալական հարթակներում եւ ՋԼՄ-ներով հրապարակումներ էին եղել, որ Նոր Նորք վարչական շրջանում շների թունավորման դեպքեր են գրանցվել: Այս մասին հայտնում են ոստիկանությունից: Մամուլի հրապարակումներն ուսումնասիրվում էին ոստիկանության Նոր Նորքի բաժնում:

«Նոյեմբերի 9-ին ոստիկանության Նոր Նորքի բաժին կոլեկտիվ դիմում է ստացվել, որ վերջին մեկ ամսվա ընթացքում 8-10 շուն այգում կերել են անհայտ նյութով լցված նրբերշիկ եւ սատկել են: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին»,- նշվում է հայտարարության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 8-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 85 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՆՈՒՄ

Պառավաքարի միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Ղայթմազյանը նոր ուսումնական տարվա սկզբից՝ սեպտեմբերի 1-ից՝ ամեն օր՝ առավոտյան ժամը 9-ից, փակել է տվել դպրոցի դռները, եւ բոլոր ուշացած աշակերտները հնարավորություն չեն ունեցել մասնակցելու դասերին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթի անունից գրավոր հարցում եմ ուղարկել՝ հարցնելով՝ դպրոցի տնօրեն Ն. Ղայթմազյանի այդ գործողությունը օրինական է, թե անօրինական: Մարզպետի գրավոր պատասխանում նշված է, որ դպրոցի ծնողխորհուրդների նախագահների առաջարկությունը հաշվի է առնվել, «Պառավաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առավոտյան ժամը 9:00-ին ժամանակավորապես փակվել է մուտքի դուռը մինչեւ 1-ին դասաժամի ավարտը, չի թույլատրվել աշակերտների մուտքը դպրոց, որոշումը կայացվել է մանկավարժական եւ ծնողական խորհուրդների նիստերում՝ աշակերտների ուշացումները կանխելու եւ կարգապահությունը բարձրացնելու նպատակով: Պառավաքարի դպրոցից հայտնում են, որ ուշացած, դպրոցի դռների փակ լինելու պատճառով առաջին դասաժամին չմասնակցած աշակերտներին դպրոցի տնօրինությունը համարում է ամբողջ օրը դասերից բացակայած: Պառավաքարի դպրոցի ծնողխորդի անդամ Գոհար Ալավերդյանը հայտնում է Պառավաքարի դպրոցում կատարվող անթույլատրելի երեւույթների մասին. «ՀՀ տարածքում այդքան դպրոցներից կարո՞ղ եք նշել այնպիսի մեկը, որտեղ բռնանում են աշակերտների ազատությանը. ո՞ր դպրոցում են աշակերտները ջուր խմում զուգարանի ծորակից, ո՞ր կրթական հաստատությունում են աշակերտի առաջ դուռ փակում, ո՞ր դպրոցում են ուսուցչին ազատում աշխատանքից՝ պատճառաբանելով, թե թափուր հաստիք չկա, բայց ամիսներ անց նույն մասնագիտությամբ հեռակա սովորած այլ աշխատողի ընդունում աշխատանքի: Պատճառը հաստիք չլինելը չէ, այլ այն, որ աշխատողը ներկայիս տնօրենի համախոհը չի եղել ու չի սատարել նրան տնօրենի ընտրության ժամանակ: Կարող եմ փաստել, որ այս ամենը գալիս է իրենց սեփական շահից: Երեխա եք կրթում, դաստիարակում, որ վաղը երբ գա աշխատանք խնդրի իր սեփական դպրոցից, հեռացնե՞ք»: Դպրոցական աշնանային արձակուրդների ավարտից հետո՝ հոկտեմբերի 31-ին եւ դրանից հետո մնացած օրերին, Պառավաքարի դպրոցի տնօրեն Նաիրա Ղայթմազյանը չի կարգադրել առավոտյան ժամը 9-ից փակել դպրոցի մուտքի դռները, սակայն նոյեմբերի 8-ին Նաիրա Ղայթմազյանը կրկին կարգադրել է փակել դպրոցի դռները: Պառավաքարի դպրոցից զանգահարել, բողոքել են Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչություն, որից հետո Ն. Ղայթմազյանը դպրոցի մուտքի դռները բացել է տվել: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը աչք է փակում, նույնիսկ արդարացնում է Պառավաքարի դպրոցի տնօրեն Ն. Ղայթմազյանի կատարած ակնհայտ ապօրինությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵՐԹՈՒՂԻՆԵՐ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՄ-Ի ՀԱՄԱՐ՝ ՖԻՔՍՎԱԾ ԳՈՒՄԱՐ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կարվեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ փոփոխություններով նպատակ է առկա վերանայել կանոնավոր ուղեւորափոխադրումների կազմակերպման գործընթացը կանոնակարգող դրույթները:

Առաջարկվում է գործող ընթացակարգերին զուգահեռ սահմանել ներհամայնքային երթուղիների սպասարկման կազմակերպման նոր ընթացակարգ, որը հնարավորություն կտա ներհամայնքային երթուղիները սպասարկող կազմակերպություններ ընտրել ոչ միայն մրցույթով, այլ նաեւ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան գնման ընթացակարգով:

Այս դեպքում գնման գործընթացի հաղթող կճանաչվի երթուղու մեկ կիլոմետրի սպասարկման համար ամենացածր արժեք ներկայացրած կազմակերպությունը՝ ի տարբերություն գործող կարգավորումներով սահմանված մեկ ուղեւորի տեղափոխման արժեքի: Այսինքն՝ համայնքին մատուցվելու է սահմանված գնման գործընթացով նախատեսված պահանջներին համապատասխանող եւ պահանջված քանակի ավտոբուսներով սպասարկման ծառայություն, իսկ ծառայության վճարումը կատարվելու է տվյալ երթուղու յուրաքանչյուր կիլոմետրի սպասարկման համար:

Առաջարկվող կարգավորման արդյունքում ուղեւորների վճարված փոխադրավարձն ամբողջությամբ վճարվելու է համայնքի բյուջե, եւ փոխադրող կազմակերպությունը համայնքից ստանալու է իր ծառայության ֆիքսված գնման գործընթացի շրջանակներում սահմանված վճարը՝ անկախ փոխադրված ուղեւորների քանակից: Հարկ է նշել, որ նման մոտեցում սահմանված է նաեւ համայնքի կողմից մատուցվող մյուս ծառայությունների համար:

Բացի այդ, առաջարկվում է վերանայել երթուղային ցանցերի համաձայնեցման եւ միասնական երթուղիների չվացուցակների ու ուղեգծերի փոփոխությունների կատարման գործընթացը, ինչպես նաեւ խոշորացված համայնքների տրանսպորտային սպասարկման գործընթացը համայնքի ղեկավարի դիմումի համաձայն լիազոր մարմնի կողմից միասնական երթուղային ցանցի շրջանակներում կազմակերպելու հնարավորությունը:

Առաջարկվում է կանոնակարգել նաեւ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ կազմակերպությունների կողմից ներհամայնքային կանոնավոր ուղեւորափոխադրումների սպասարկման գործընթացը, նաեւ փոփոխել եւ սահմանել, որ օպերատոր է հանդիսանում փոխադրումների իրականացման ծառայություններ մատուցող ցանկացած կազմակերպություն: Վերանայվում է «օպերատոր» հասկացությունը:

Այսինքն՝ներհամայնքային փոխադրումներ իրականացնող օպերատորը, կնքելով երկարաժամկետ պայմանագիր, հնարավորություն է ունենալու կատարել ներդրումներ ավտոբուսների ձեռքբերման համար, ինչպես նաեւ ստանալով յուրաքանչյուր կիլոմետրի համար ֆիքսված վճար՝ շահագրգիռ չի լինելու տեղափոխել թույլատրելի քանակից ավել ուղեւորներ, կայանել կանգառից դուրս կամ կատարել այլ խախտումներ: Բացի այդ, տվյալ դեպքում համայնքի ավագանին հնարավորություն կստանա սահմանել արտոնություններ որոշ ուղեւորների համար՝ ըստ սոցիալական խմբերի, ինչպես նաեւ սահմանելով փոխադրման վճարի չափը՝ ինքնուրույն որոշել այն բարձրացնել՝ հավասարեցնելով փոխադրող կազմակերպությանը վճարվող գումարի համար անհրաժեշտ չափին, թե հավաքագրելով ավելի փոքր չափով գումար՝ իր մյուս միջոցների հաշվին փոխադրողին վճարել ավելի մեծ չափով ծառայության վճար, այդպիսով սուբսիդավորել փոխադրման վճարի չափը:

ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՆ ՏՈՒՆ»

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԵՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտադիտարկման չհայտարարված այց են իրականացրել «Երեւանի մանկան տուն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն: Հատուկ ուսումնասիրվել են երեխաների սոցիալական ներառման, ընտանիքների եւ հարազատների հետ հաղորդակցության, երեխայի լավագույն շահի երաշխավորման հետ կապված հարցերը:

Այցի ընթացքում արձանագրվել են մի շարք հիմնախնդիրներ՝

-արձանագրվել են դեպքեր, երբ նույն ընտանիքի երեխաներից մեկի խնամքը կազմակերպվում է խնամատար ընտանիքում, իսկ մյուսինը՝ հաստատությունում, սակայն նրանց համար տեսակցություններ չեն կազմակերպվել: Արձանագրվել են նաեւ դեպքեր, երբ հաստատության տարբեր տարիքային խմբերում խնամվում են քույր-եղբայր կամ ազգական երեխաներ, սակայն բավարար աշխատանքներ չեն իրականացվում նրանց ազգակցական կապի պահպանման ուղղությամբ,

-հագուստը, այդ թվում՝ ներքնազգեստը, անհատականացված չէ, ինչի պատճառով բացառված չէ, որ դրանք լվանալուց հետո նույն հագուստը կամ ներքնազգեստը կարող են կրել տարբեր երեխաներ,

-որոշ խմբասենյակներում սպասքի, օրինակ՝ բաժակների, այդ թվում՝ ծծակով շշերի անհատականացումն անընթեռնելի է եղել, ինչը պատճառաբանվել է նրանով, որ ախտահանող լուծույթի պատճառով գրառումները մաքրվում են,

-որոշ խմբասենյակներում սպասքի ախտահանման համար նախատեսված լուծույթով տարաները, էլեկտրական սալիկները դրված են եղել հատակին կամ երեխաների համար հասանելի բարձրության վրա, ինչը վտանգավոր է երեխաների անվտանգության տեսանկյունից,

-պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ծրագրերի ֆինանսավորման սպառման հետեւանքով 2022 թվականի սեպտեմբերից ի վեր հնարավոր չի եղել իրականացնել մի շարք բժշկական հետազոտություններ, օրինակ՝ օրթոպեդիկ, ակնաբուժական ոլորտներում:

Մշտադիտարկման արդյունքներն ամփոփման փուլում են: Արձանագրված այս եւ այլ խնդիրները՝ լուծումների առաջարկներով, կուղարկվեն ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ

Team Telecom Armenia-ն, շարունակելով ընդլայնել իր առաջարկները եւ զարգացնել հաճախորդներին համալիր ծառայություններ մատուցելու կոնցեպտը, հայտարարում է իր մասնաճյուղերից TCL հեռուստացույց ձեռք բերելու հնարավորության մասին:

Բաժանորդագրվելով ընկերության Cosmo եւ Combo փաթեթներից որեւէ մեկին 12 ամսով՝ Team-ի հաճախորդները կարող են գնելTCL 7-րդ սերնդի սմարթ հեռուստացույց 197000 դրամ աննախադեպ գնով ու դիտել մեծ ֆուտբոլը՝ Աշխարհի առաջնությունը, մեծ էկրանին:

TCL 55" անկյունագծով Android TV-ի գլխավոր հատկանիշներն են 4K UltraHD էկրանը, ձայնային կառավարումը, Dolby VisionզAtmos տեսաձայնային տեխնոլոգիան, ինչպես նաեւ YouTube, խաղեր եւ այլ պահանջված հավելվածներ Play Market-ից ներբեռնելու հնարավորությունը:

Հեռուստացույցի համար տրամադրվելու է 1 տարվա երաշխիք, իսկ ձեռք բերել կարելի է եւ՛ կանխիկ, եւ՛ ապառիկ եղանակով: Նշենք նաեւ, որ այս հեռուստացույցներում արդեն առկա է Team TV հավելվածը եւ դրա օգտագործման համար անհրաժեշտ չէ հավելյալ սարք: Ի դեպ, հեռուստացույցը հնարավոր է ձեռք բերել նաեւ առանց բաժանորդագրության՝ 277 000 դրամով:

2021 թվականին TCL-ի Android Տշart TV-ն ճանաչվել է ամենավաճառվողը, իսկ TCL Electronics-ը LCD հեռուստատեսային բրենդերի շարքում երկրորդն է աշխարհում:

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Առողջության առաջնային պահպանման օղակում բուժաշխատողների աշխատավարձը 2023 թվականին կբարձրանա: ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Ջումայանը տեղեկացրեց, որ սա պասիվ աշխատավարձի բարձրացում չի լինելու: «Այսինքն՝ չի լինելու այնպես, որ ունենք այսքան գումար եւ այն բարձրացնելու ենք ու դառնալու է իքս գումար: Փոխարենը բուժաշխատողի պարտականությունները պատշաճ կատարելու պարագայում նա կստանա բոնուսներ, ըստ այդմ էլ՝ կբարձրացվի աշխատավարձը»,-ասաց Արտակ Ջումայանը: Արդեն իսկ այդ բոնուսային համակարգը կա, սակայն նախարարի տեղակալը նշեց, որ գնահատվող ցուցանիշներն են թերի, ինչպես նաեւ ֆինանսավորումն է փոքր: Ներկայում աշխատանք է տարվում այդ ցուցանիշների առավել հստակեցման ուղղությամբ, որ շոշափելի լինի բուժառուի հետ աշխատանքը, հեշտ լինի նախարարության կողմից իրականացվող վերահսկողությունը: «Այս պահին ունենք 32 տեսակի գնահատման ցուցանիշ. դրանք վերանայում ենք: Աշխատել բուժառուի հետ, անհրաժեշտության դեպքում ուղղորդել այս կամ այն նեղ մասնագետի մոտ, հետեւել ընթացքին, ներգրավել սքրինինգային ծրագրերում եւ այսպես շարունակ. ամբողջ շղթան պետք է վերահսկվի ու մեզ համար տեսանելի լինի: Ճիշտ ու պատշաճ աշխատանքի արդյունքում կփոխանցվեն համապատասխան բոնուսներ, որոնց հիման վրա էլ կբարձրացվի աշխատավարձը»,-ասաց Արտակ Ջումայանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ

ՀՀ ԿԳՄՄՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից Armlur.am-ին հայտնեցին, որ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը նոյեմբերի 8-ի նիստում դրական եզրակացություն է տվել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին:

Հիմնական զեկուցող ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ նախագծի ընդունման դեպքում կստեղծվի իրավական հիմք (լիազորող նորմ), որը հնարավորություն կընձեռի ՀՀ կառավարությանը եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնին ընդունելու ՄԿՈՒ ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական իրավական ակտեր:

Ըստ նախարարի տեղակալի՝ առաջարկվում է ներդնել ատեստավորման եւ տարակարգերի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան փոխելու ՄԿՈՒ ոլորտում աշխատողների դրույքաչափը, ինչպես նաեւ սահմանելու հավելավճարներ: Այս փոփոխությունների ընդունմամբ նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շուրջ 7000 աշխատակցի համար կստեղծվեն մասնագիտական զարգացման եւ վարձատրության բարձրացմամբ փոխկապակցված գործուն մեխանիզմներ: Կսահմանվի նոր մասնագիտությունների ներդրման, հաստատությունների եւ դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացման, ընդունելության տեղերի բաշխման նոր մեթոդաբանություն, ինչպես նաեւ կներդրվեն վարձատրության մեխանիզմների բարելավման հետ փոխկապակցված մանկավարժների մասնագիտական զարգացման եւ ատեստավորման ճկուն համակարգեր:

«Վերոնշյալ իրավական ակտերի ընդունումից հետո կսահմանվեն նոր մասնագիտությունների ներդրման, հաստատությունների եւ դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացման, ընդունելության տեղերի բաշխման նոր մեխանիզմներ: Կարեւոր փոփոխություններից մեկը մանկավարժների մասնագիտական զարգացման եւ ատեստավորման համակարգերի ներդրումն է, որի նպատակն է բարելավել ոլորտում աշխատող մասնագետների վարձատրությունը՝ ապահովելով հավելավճարների կայուն մեխանիզմներ»,- նշել է Ժաննա Անդրեասյանը: Ըստ նախարարի տեղակալի՝ օրենքի նախագծով ՀՀ կառավարությանը եւ ԿԳՄՍ նախարարությանը նոր իրավական ակտեր ընդունելու լիազորություն է տրվել, որոնց հիման վրա կմշակվեն ՄԿՈՒ հաստատությունների մանկավարժների վերապատրաստման, ատեստավորման, տարակարգերի տրամադրման նոր կարգերը: Դրանց արդյունքում կբարձրանա մանկավարժների աշխատավարձը: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է նաեւ ներդնել տրանսպորտային ծախսերի փոխհատուցման մեխանիզմ ուսանողների եւ դասախոսների համար: Ժաննա Անդրեասյանը, անդրադառնալով օրենքի նախագծում առաջարկվող փոփոխություններին եւ լրացումներին, նշել է, որ քոլեջները եւ ուսումնարանները, բացի ՊՈԱԿ-ից, կարող են ունենալ նաեւ օրենսդրությամբ նախատեսված կազմակերպաիրավական այլ ձեւ: Ըստ նրա՝ դրանով կստեղծվի իրավական հնարավորություն մասնավորի հետ համատեղ կառավարման մոդելների ամբողջական ներդրման համար: Փոփոխություններ կիրականացվեն նաեւ ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքին վերաբերող հավաստագրման ընթացակարգում: Նախագիծը ստացել է դրական եզրակացություն:

Հանձնաժողովի նիստը վարել է ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը:

Ս.Հ.

ՍՊԻՏԱԿ

ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԴԱՀԼԻՃԸ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է

ՀՀ ԿԳՄՄՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից Armlur.am-ին հայտնեցին, որ բռնցքամարտի աշխարհի գավաթակիր, աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր Անդրանիկ Հակոբյանի եւ նրա ընկերների ջանքերով հիմնանորոգվել է Սպիտակի մանկապատանեական մարզադպրոցի բռնցքամարտի մարզադահլիճը:

Մարզադահլիճի բացման արարողությանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը, հունահռոմեական ոճի ըմբիշ, Օլիմպիական խաղերի չեմպիոն, աշխարհի քառակի, Եվրոպայի հնգակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը, բռնցքամարտի աշխարհի գավաթակիր, աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր Անդրանիկ Հակոբյանը, Սպիտակ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը, «Սպիտակի մանկապատանեական մարզադպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, ՀՀ վաստակավոր մարզիչ Մանվել Խոյեցյանը եւ այլք:

Միջոցառման մեկնարկին մարզադպրոցի բակում տեղի է ունեցել արցախյան հերոսամարտում Սպիտակի տարածաշրջանից զոհված մարզիչ-մարզիկների հիշատակը հավերժացնող խաչքարհուշարձանի օրհնության կարգ՝ ձեռամբ Սպիտակի Սուրբ Հարություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Օվսե քահանա Հովհաննիսյանի:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը, ողջունելով ներկաներին, կարեւորել է մասնավոր կառույցների եւ բարերարների օժանդակությամբ իրականացվող աշխատանքները:

«Մարզադահլիճի բացումը երկու խորհուրդ ունի՝ հարգել այն մարդկանց հիշատակը, որոնք ամեն ինչ արել են՝ հանուն հայրենիքի, եւ մեկնարկը տալ մի մարզադպրոցի, որտեղ կկոփվեն շատ մանուկներ: ՀՀ կառավարությունը սպորտի ոլորտում հսկայածավալ շինարարություն է իրականացնում. կառուցվում են նոր մարզական դպրոցներ, համալիրներ: Որքան էլ պետությունն ահռելի միջոցներ է ներդնում, մասնավորի օժանդակությունը շատ կարեւոր է: Շնորհակալ եմ մեր անվանի բռնցքամարտիկ Անդրանիկ Հակոբյանին եւ նրա ընկերներին, որ այսպիսի ներդրում են կատարել հայկական սպորտում: Վերջերս բարերարների ջանքերով հիմնանորոգվեց նաեւ Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի մարզադպրոցը: Սպորտում ներդրումներն անհրաժեշտ են առողջ սերունդ դաստիարակելու համար»,- նշել է Կարեն Գիլոյանը՝ գործարարներին հորդորելով աջակցել սպորտի ոլորտի պետական քաղաքականությանը՝ ներդրումներ կատարելով սպորտային ենթակառուցվածքների զարգացման ասպարեզում:

Հիմնովին վերանորոգված մարզադահլիճը հագեցվել է անհրաժեշտ մարզագույքով, տեղադրվել է պրոֆեսիոնալ ռինգ, որտեղ իրենց մարզումներն առավել արդյունավետ անցկացնելու հնարավորություն կունենան բազմաթիվ պատանիներ:

Սպիտակ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը շնորհակալագիր է հանձնել «Անդրանիկ Հակոբյան եւ ընկերներ» բարեգործական հիմնադրամին «Սպիտակի մանկապատանեական մարզադպրոց» ՊՈԱԿ-ում բռնցքամարտի մարզադահլիճը հիմնովին վերանորոգելու համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ

ԲՈՒՌՆ ԾԱՓՈՂՋՈՒՅՆՆԵՐ՝ ՆԻԿՈԼԱՅ ԼՈՒԳԱՆՍԿԻՆ

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական 23-րդ փառատոնի շրջանակներում նոյեմբերի 8-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ վիրտուոզ դաշնակահար Նիկոլայ Լուգանսկիի եւ Մոնրեալի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար Շառլ Դյուտուայի համերգը: Երեկոյին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի նվագակցությամբ հնչեցին Ֆրեդերիկ Շոպենի «Դաշնամուրի կոնցերտ թիվ 2», Էկտոր Բեռլիոզի «Ֆանտաստիկական սիմֆոնիա» ստեղծագործությունները:

Լեփ-լեցուն դահլիճը բուռն ծափահարություններով, «բրավո», «բիս» վանկարկումներով մի քանի անգամ ստիպեց երաժիշտներին վերադառնալ բեմ, եւ Նիկոլայ Լուգանսկին արդեն առանց նվագախմբի նվագակցության նվագեց՝ նորից արժանանալով ջերմ ծափահարությունների:

Ավել վաղ Շառլ Դյուտուան, որն ավելի քան 40 միջազգային մրցանակների, այդ թվում՝ երկու «Գրեմմի»-ի դափնեկիր է, նշել էր, որ 15 տարի առաջ որպես զբոսաշրջիկ է այցելել Հայաստան: «Երեւանը տարիների ընթացքում ավելի է գեղեցկացել: Այստեղ համախ ես հանդիպում ժպտերես ու երջանիկ մարդկանց»,- նշել էր Դյուտուան:

Որպես դիրիժոր նա առաջին անգամ էր հանդես գալիս Երեւանում: Երաժիշտը խոստովանել էր, որ իրեն դուր է գալիս Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ աշխատանքը, Նիկոլայ Լուգանսկիի հետ ելույթ ունենալը:

Ռուսաստանի ժողովրդական արտիստ, ՌԴ պետական մրցանակի դափնեկիր Նիկոլայ Լուգանսկին էլ շեշտել էր, որ բազմաթիվ հայ երաժիշտների հետ է համագործակցում եւ բարձր է գնահատում աշխարհահռչակ հայ կոմպոզիտորներին, մենակատարներին: «Արամ Խաչատրյանն իմ սիրած կոմպոզիտորներից է: Չեմ կարող չհիշել նաեւ Բաբաջանյանին, Տերտերյանին, որոնց գործերը շատ են հետաքրքիր: Մոսկվայում շատ են հայ երաժիշտները, որոնց հետ աշխատում եմ: Նրանցից են թավջութակահար Նարեկ Հախնազարյանը, Սերգեյ Բաբայանը, որը ֆանտաստիկ դաշնակահար է»,- ընդգծել էր Լուգանսկին:

Նա պատմել էր, որ իր ծնողները երաժիշտներ չեն, սակայն շատ են սիրել երաժշտություն: Ընտանեկան լեգենդի համաձայն՝ երիտասարդ տարիքում Լուգանսկիի մայրը դաշնակահարի հորը հրավիրել է Մոսկվայի մեծ թատրոն՝ ունկնդրելու Վերդիի «Տրավիատա» օպերան: Դաշնակահարի հոր ամենասիրելի օպերան հենց «Տրավիատա»-ն է եղել, եւ նրան այնքան է տպավորել այն հանգամանքը, որ երիտասարդ աղջիկն իրեն հրավիրել է դիտելու այդ օպերան, որ որոշ ժամանակ անց նրան ամուսնության առաջարկություն է արել: «Ինքս դժվարանում եմ ասել, թե որ ստեղծագործությունն է ինձ շատ ոգեւորել ու կարեւոր որոշումներ կայացնելու առիթ տվել, սակայն հիշում եմ, որ իմ կյանքում կար մի շրջան, երբ ընկճված էի: Հենց այդ ընթացքում ունկնդրում էի Սիբելիուսի 7-րդ սիմֆոնիան, ինչն ինձ երջանկացնում էր»,- խոստովանել էր դաշնակահարը:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

«Նապոլիի» իտալացի գլխավոր մարզիչ Լուչանո Սպալետին մեկնաբանել է 2:0 հաշվով հաղթանակն «Էմպոլիի» նկատմամբ Իտալիայի առաջնության 14-րդ տուրի տնային խաղում: «Նապոլին» 38 միավորով առաջատարն է եւ երկրորդ տեղում գտնվող «Միլանից» առաջ է 8 միավոր: «Հասանք կարեւոր հաջողության, բայց Իտալիայի առաջնությունը շատ երկար է: Ուրախ եմ, որ մեր թիմի ֆուտբոլը գովում են եւ համարում գերազանց, բայց այդ կարծիքները պետք է չազդեն մեզ վրա: «Նապոլիի» հեռանկարներն ու երազանքները շատ հստակ են: Այս երեք միավորը մեզ կօգնեն համարձակ գնալ առաջ: Չեմպիոնության հավակնորդները նախկինի նման յոթն են: Ոչինչ չի փոխվում»,- ասել է Սպալետին: Աշխարհի առաջնությունից առաջ վերջին հանդիպումը «Նապոլին» կանցկացնի նոյեմբերի 12-ին՝ ընդունելով «Ուդինեզեին»: Իտալիայի առաջնությունը կվերսկսվի հունվարի 4-ին:

ԴԱԴԱՐԻ ԵՆ ԳՆՈՒՄ

«Բարսելոնայի» գլխավոր մարզիչ Չավին մեկնաբանել է 2:1 հաշվով կամային հաղթանակը «Օսասունայի» նկատմամբ Իսպանիայի առաջնության 14-րդ տուրի արտագնա խաղում: 31-րդ րոպեին երկրորդ դեղին քարտի համար հեռացվել էր կատալոնական թիմի լեհ հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկին 0:1 հաշվի ժամանակ: Երկրորդ խաղակեսում Պեդրիի եւ Ռաֆինյայի գոլերը հաղթանակ բերեցին «Բարսելոնային»: «Շատ եմ հպարտանում մեր թիմով: Մեր հանդերձարանում ընտանիք է: Ամեն ինչ մեզ դեմ էր՝ մրցավարի որոշումները, բաց թողած գոլը, 10 ֆուտբոլիստով մնալը, բայց մենք շատ խելացի խաղացինք եւ շատ լավ օգտագործեցինք մեր պահերը: Սա ոսկե հաղթանակ է, դադարի ենք գնում առաջատարի դիրքում: Սա ամբողջ թիմի հաղթանակն է»,- ասել է Չավին: «Բարսելոնան» 37 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը եւ 5 միավոր առաջ է երկրորդ տեղում գտնվող «Ռեալից», որը 1 խաղ քիչ է անցկացրել: Արքայական թիմը նոյեմբերի 10-ին կընդունի «Կադիսին»: Իսպանիայի առաջնությունը աշխարհի առաջնությունից հետո կվերսկսվի դեկտեմբերի 31-ին:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻՉԸ

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը դրվատանքով է խոսել թիմի իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտիի մասին: «Անչելոտին լավագույն մարզիչն է «Ռեալի» համար: Նա կատարյալ է հասկանում մեր արժեքներն ու գաղափարները: Դրա շնորհիվ խաղացողները զգում են նույնը: Մենք հրաշալի հարաբերություններ ունենք, նա կատարյալ մարզիչ է մեր ակումբի համար»,- ասել է Պերեսը: Անչելոտին «Ռեալը» երկրորդ անգամ գլխավորեց անցած տարվա հունիսին: Թիմը նվաճեց Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը (2022), Չեմպիոնների լիգայի գավաթը (2022), Եվրոպայի սուպերգավաթը (2022):

ԼՈՒՐԵՐ

ԱՐՑԱԽԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻՑ

«Մենք ենք մեր սարերը» արձանը, որը կառուցվել է 1967 թվականին, հասարակության շրջանում հայտնի է որպես «Պապիկ, տատիկ», իսկ արցախի բարբառով՝ «Դեդո, բաբո»:

Արձանի քանդակագործը Սարգիս Բաղդասարյանն է, իսկ ճարտարապետը՝ Յուրի Հակոբյանը: Քանդակը պատրաստված է կարմիր տուֆից: Այն խորհրդանշում է արցախյան հողի եւ ժողովրդի արմատների միջեւ արյունակցական կապը:

Հուշարձանը ներկայացնում է հասուն տարիքի արցախցի ամուսինների՝ հայկական տարազով: Այն տեղակայված է բլրի գագաթին, կարծես այն ճեղքել եւ դուրս է եկել:

Հուշարձանը կանգնեցնելու մտահղացումը եղել է Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի գործկոմի նախագահ Մուշեղ Օհանջանյանինը, ինչին, սակայն, դեմ է եղել Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը:

Կոթողի պատկերով նաեւ ՀՀ հուշադրամ է հայտնվել:

ՆՈՐ ՖԻԼՄ՝ ՀԱՐԻ ՓՈԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Warner Bros. Discovery ընկերության գործադիր տնօրեն Դեյվիդ Զասլավը ներդրողներին հայտնել է, որ ձգտում է Հարի Փոթերի մասին ավելի շատ ֆիլմեր թողարկել, եթե բրիտանացի գրող, Փոթերի մասին գրքերի հեղինակ Ջոան Ռոուլինգը տա իր համաձայնությունը. հաղորդում է The Hollywood Reporter-ը: «Մենք Հարի Փոթերին չենք նկարել արդեն 15 տարի: DC-ի ֆիլմերը եւ ֆիլմերը Հարի Փոթերի մասին վերջին 25 տարում մեծ եկամուտներ են բերել Warner Bros.-ին»,- ասել է Զասլավը՝ նշելով, որ դրա համար պատրաստ է Ռոուլինգի համաձայնությունը:

Հարի Փոթերի մասին պատմող յոթ գրքերը լույս են տեսել 1997-2007 թվականներին՝ համաշխարհային հռչակ բերելով Ռոուլինգին: Շուրջ 80 լեզվով թարգմանված գրքերը տպագրվել են ավելի քան 500 միլիոն օրինակով: Գրքերի հիման վրա նկարահանվել է ութ ֆիլմ:

● Նոյեմբերի 12-ին Գյումրու «Հայաթ» ռեստորան եւ մյուզիք հոլում տեղի կունենա «Menq Project» համերգը: Տոմսերի արժեքը՝4000, 5000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ո՞վքեր կարող են մասնակցել ներքին աուդիտորի որակավորման քննություններին:

Ջուլիետա Խարազյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման պահանջների համաձայն՝ ներքին աուդիտորների որակավորման նպատակով անցկացվող քննություններին (այսուհետ՝ քննություն) կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող այն քաղաքացիները,

1) որոնք դատական կարգով չեն ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) որոնք չունեն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն,

3) որոնք դատական կարգով չեն զրկվել ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

4) ում քննությանը մասնակցելու համար լիազոր մարմին նախորդ 3 տարվա ընթացքում ներկայացված դիմումը չի մերժվել լիազոր մարմնի կողմից՝ պահանջվող փաստաթղթերում կեղծ եւ (կամ) անարժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու հիմքերով:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ է առձեռն, փոստով (էլ. փոստ՝ secretariat@minfin.am) կամ էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով) լիազոր մարմին ներկայացնել՝

-դիմում,

-անձնագրի եւ սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենը,

-բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

-հայտարարություն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Օտարերկրյա քաղաքացին կարո՞ղ է Հայաստանի Հանրապետությունում հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր:

Ռիտա Պողոսյան (25 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Կազմակերպություններին եւ ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու եւ հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքը /3-րդ հոդված/ տարածվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց վրա:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ԱԶ գրանցվելու համար անհրաժեշտ է հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման համար դիմում, անձնագրի եւ սոցքարտի պատճենները, գունավոր լուսանկար՝ 3x4 չափի, պետական տուրքի անդորրագիր՝ 3000 դրամ՝ 900005160750 հաշվեհամարին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Էրեբունի-Աթոյան փողոցների խաչմերուկում բախվել են Երեւանի բնակիչներ, 41-ամյա Լուսինե Ղուկասյանի վարած Skoda մակնիշի եւ 52-ամյա Վիրաբ Ղազարյանի վարած Nissan Xtrail մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով 1 հոգի մարմնական վնասվածքներ է ստացել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.11.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: